ՀՀ Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հակոբ Սիմիդյանին

պատճենը՝ ՀՀ Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար
պարոն Գնել Սանոսյանին

12 փետրվարի, 2024թ.

№ ՍՄ-1-24

Հարգելի՛ պարոն Սիմիդյան

Սույնով հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Սյունիքի մարզի Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Թխկուտի տեղամասի օգտակար հանածոների պաշարների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների (թույլտվություն թիվ ԵՀԹ-29/361՝ տրամադրված «Սաութ Մայն» ՍՊԸ-ին 2022թ. հոկտեմբերի 21-ին՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից) աշխատանքային ծրագրով նախատեսված է եղել վերագնահատումն իրականացնել բացառապես աշխատանոցային եղանակով՝ եղած ֆոնդային նյութերի հիման վրա, առանց որևէ դաշտային հետախուզական աշխատանքի: Ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի» նախատեսված աշխատանքները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ուստի և բնապահպանական և արտակարգ միջոցառումների, ինչպես նաև մոնիտորինգի ծրագրի մշակում չի պահանջվել և նման աշխատանքներ նախատեսված չեն եղել «Սաութ Մայն» ՍՊԸ-ի աշխատանքային ծրագրով:

Վերոհիշյալի հիման վրա 2023թ. ընթացքում «Սաութ Մայն» ՍՊԸ-ի կողմից ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ չեն իրականացվել:

Հարգանքով,
«Սաութ Մայն» ՍՊԸ տնօրեն

«ՍԱՈՒԹ ՄԱՅՆ» «САУТ МАЙН» «SOUTH MINE» 02848445

Արմեն Թադևոսյան

Հանրապետության 78, 41-42
091 412871
091 422979

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № Ն-3625
«13» 02 2024թ.